

## **Բիզնեսի զարգացման ծրագրի մասնակցության հրավեր Գեղարքունիքի և Կոտայքի մարզերի երիտասարդ ձեռներեցների համար**

ՄԱԶԾՆ Ռուսաստանի Դաշնության կողմից ֆինանսավորվող՝ «Հայաստանի մարզերում երիտասարդության համար զբաղվածության և եկամուտ ստեղծող հնարավորությունների բացահայտում» ծրագրի շրջանակներում, «Բի Էս Սի» Բիզնեսի Աջակցման Կենտրոնի հետ համատեղ իրականացնում է միկրո և փոքր ձեռնարկությունների աջակցության ծրագիրը:

### **Ծրագրի նպատակն է**

- բարձրացնել երիտասարդների աշխատունակությունը մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտում,
- նպաստել թիրախային շրջանների՝ Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի երիտասարդության աշխատանքի անցմանը,
- աջակցել նշված մարզերի շրջաններում երիտասարդների տնտեսական հզորացմանը:

### **Ծրագրին կարող են դիմել այն բիզնեսները, որոնք**

- գրանցված են և գործունեություն են ծավալում Կոտայքի կամ Գեղարքունիքի մարզերում,
- համարվում են միկրո կամ փոքր ձեռնարկատիրություններ,
- գործում են 2 և ավելի տարիներ,
- ունեն տարեկան 6 մլն ՀՀ դրամից ոչ պակաս շրջանառություն,
- ձեռներեցները պետք է պատրաստ լինեն կատարել սեփական ներդրում՝ դրա մաշնորհային գումարի 10%-ի չափով,
- բիզնեսի սեփականատերը հանդիսանում է մինչև 35 տարեկան ձեռնարկատեր,
- Կարող են մասնակցել ընկերություններ բոլոր ոլորտներից, բացի մանրամեծաձախ առևտրից:

### **Ծրագիրը պարունակում է**

- 7 օրյա դասընթացներ ձեռնարկատիրության վերաբերյալ,
- բիզնես խորհրդատվություն,
- բիզնես պլանի մշակում,
- բիզնես գաղափարների ներկայացում,

- դրամաշնորհների տրամադրում,
- ընթացիկ խորհրդատվություն և մոնիթորինգ:

Ծրագրին կարող էք դիմել [հետևյալ հղումով](#) մինչև սեպտեմբերի 30-ը ներառյալ:

Դիմորդները ընտրվելու են ըստ դիմում հայտերի, որտեղ գնահատվելու են նաև ստակի հիմնավորումը, բիզնեսի մասին տարրական գիտելիքները և բիզնես գաղափարը (որքանով է այն իրատեսական և հեռանկարային): Ստացված դիմում-

հայտերի հիման վրա՝ հաջորդ փուլ անցած դիմորդների հետ կապ կհաստատվի և կիրականացվի հարցազրույցներ, որոնց հիման վրա կընտրվեն ծրագրի մասնակիցները:

Դիմորդների ընտրության փուլում՝ հավասար միավորներ ձեռք բերելու պարագայում կսահմանվեն առաջնահերթություններ:

#### **Առաջնահերթություններ կարող են տրվել այն ընկերություններին, որոնց**

- սեփականատերը ունի ֆիզիկական հաշմանդամություն,
- գործում է գյուղական համայնքներում,
- գործում է ագրոարտադրության և ագրովերամշակման, փոքր արտադրության (չրեր, տեքստիլ արտադրանք, կաշվե իրեր, թանկարժեք և կիսաթանկարժեք քարերից և մետաղներից իրեր, գյուղմթերքներ), SS, զբոսաշրջության, ժամանցի, հանգստի և մշակույթի ոլորտում,
- սեփականատերը կին է:

Դասընթացի մասնակցության տեղերը սահմանափակ են՝ 30 մասնակցի երկու մարզերից: Դասընթացի ավարտին մասնակիցները ընտրող հանձնաժողովին ներկայացնելու են ծրագրի ընթացքում իրենց մշակած բիզնես նախագծերը, ըստ որի գնահատվելու են: Գնահատման արդյունքում՝ երկու մարզերից ընդհանուր 20 մասնակիցներ կստանան **2,000,000 –**

**3,000,000 ՀՀ դրամ**՝ բիզնեսների զարգացման համար:

Դրամաշնորհառուները պարտավորվում են դրամաշնորհի ծախսման ուղղություններով ներկայացնել ֆինանսական հաշվետվությունները՝ ներառյալ ծախսերը հավաստող փաստաթղթեր:

Ծրագրի ընդհանուր տևողությունը  
մինչև դեկտեմբեր, 2022թ.:

Անցկացման վայր

Կոտայքի և Գեղարքունիքի մարզեր:

Դիմելու վերջնաժամկետ

30.09.22թ. :

Մանրամասների համար

zhanna@bsc.am, bsc@bsc.am;

+374 77 57 47 78, +374 99 57 47 78, +374 95 57 47 78:

<https://bsc.am/hy/unleashing-employment-and-income-generating-opportunities/>

**Zhanna Gevorgyan**  
**Project Manager**

6 Yekmalyan st., Yerevan, 0002, Armenia

+374 10 57 47 78 | +374 99 57 47 78

+374 77 57 47 78 | +374 11 57 47 78

[www.bsc.am](http://www.bsc.am)

---